

## ՓՈԽԸՆՄՈՒՄԱՆ ՀՈՒՇՎԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ՀԱՐՉԵՐՈՎ ԽՈՐՃՐԴԻ ՄԻՋԵՎ ԵՎ ԱՐԱԲՎԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՍՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՄԵ-ի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ազգային կոմիտեն եւ Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդը, այսուհետ Կողմեր,

գիտակցելով համաշխարհային մակարդակում աճող մտահոգությունը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հանդեպ, ինչը վտանգ է ներկայացնում միջազգային եւ ազգային անվտանգության ու տնտեսական կայունության համար,

հավատալով մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հանցագործության դեմ միջոցառումներ ձեռնարկելու եւ հանցագործներին պատժի ենթարկելու համար պետությունների (ծագման, տարանցիկ եւ նպատակակետ) փոխհամաձայնեցված շանքերի անհրաժեշտությունը,

գիտակցելով մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գոհերի պաշտպանության ապահովման եւ նրանց՝ տուն վերադարձի հարցում օգնության կարեւորությունը,

ելնելով Կողմերի համոզմունքից, որ սույն Փոխըմբռնման հուշագիրը կարող է օժանդակել Կողմերի միջեւ համագործակցությանը՝ այս հանցագործության դեմ պայքարի եւ արգելման հարցում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը կձեռնարկեն ազգային բոլոր միջոցներն ու ընթացակարգերը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարելու, դրա գոհերին պաշտպանելու եւ նրանց անհրաժեշտ օժանդակություն տրամադրելու համար:

### Հոդված 2

Յուրաքանչյուր Կողմ կաշխատի վերադարձնել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գոհերին երկրորդ Կողմին՝ համագործակցելով միջազգային կազմակերպությունների, կառավարական եւ ոչ կառավարական կառույցների հետ, հաշվի առնելով անձնական եւ ազգային անվտանգության խնդիրները:

### Հոդված 3

Կողմերը կընսարկեն շահագործման (թրաֆիքինգի) գոհերին օժանդակություն տրամադրելու եւ նրանց վերականգնմանն ուղղված միջոցառումներն ու միջոցները՝ մյուս Կողմին ետ վերադարձվելուց հետո:

### Հոդված 4

Կողմերը կիրականացնեն փորձագիտական փոխանակում՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) խնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացման եւ այս ոլորտում մասնագիտացված հետազոտական աշխատանքներին եւ ուսումնասիրություններին աջակցելու նպատակով:

### Հոդված 5

Կողմերը կփոխանակեն համապատասխան տեղեկատվություն մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ազգային օրենսդրության վերաբերյալ:

### Հոդված 6

Յուրաքանչյուր Կողմ կնշանակի պատասխանատու անձ կամ համակարգող՝ սույն Փոխըմբռնման հուշագրում նշված դրույթների կատարման հարցերով, ուստի կողմերից յուրաքանչյուրը կճանուցի մյուսին համապատասխան պատասխանատուի տվյալների եւ հաղորդակցման միջոցների մասին:

### Հոդված 7

Կողմերը կհամագործակցեն վերապատրաստման, համատեղ ուսուցողական ծրագրերի կազմակերպման եւ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում փորձագետների փոխանակման ոլորտներում՝ երկու Կողմերի կրթական, հետազոտական եւ վերապատրաստման կառույցների միջոցով:

### Հոդված 8

Յուրաքանչյուր Կողմ կկրի սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների կատարման արդյունքում ի հայտ եկած ծախսերը, բացառությամբ նրանց, որոնք համաձայնեցված են այլ ընթացակարգերով եւ համաձայնագրերով:

### Հոդված 9

Որպես սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների կատարման եւ պարզաբանման լեզու կօգտագործվի անգլերենը, իսկ, այլ լեզվով տեղեկատվության փոխանակման դեպքում, այն կուղենցվի անգլերեն թարգմանված լրացուցիչ տարբերակով:

### Հոդված 10

Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ժամանակ ի հայտ եկած տարածայնությունները կլուծվեն դիվանագիտական ուղիներով՝ երկկողմ խորհրդակցությունների միջոցով:

### Հոդված 11

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման պահից եւ ուժի մեջ կմնա այնքան ժամանակ, քանի դեռ որեւէ Կողմ մյուսին գրավոր չի ծանուցել այն դադարեցնելու իր մտադրության մասին: Նման դադարեցումը ուժի մեջ կմտնի ծանուցումը ստանալու օրվանից 90 օր անց:

### Հոդված 12

Կատարված է Երեւան քաղաքում 2009 թվականի դեկտեմբերի 5-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն եւ անգլերեն: Համաձայնագրի դրույթների մեկնաբանության ժամանակ տարածայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին: